

Արձանագրություն հ. 9

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
24. 11.16 թ. կայացած նիստի:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 37 անդամներից 28-ը:

Օրակարգում՝

1. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստացիա:
2. Դոցենտի գիտական կոչման երաշխավորություն:
3. Ընթացիկ հարցեր:

Առաջին հարցի վերաբերյալ զեկուցեցին ամբիոնների վարիչները, ովքեր ներկայացրեցին իրենց կողմից ղեկավարվող ամբիոնների հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների մեկ տարվա կատարած աշխատանքը և ատեստավորման արդյունքները:

Որոշեցին հաստատել ամբիոնների որոշումները հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման վերաբերյալ (քաղվածքներն ուղարկվում են ասպիրանտուրայի բաժին):

Երկրորդ հարցը վերաբերվում էր ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտ Քրիստինե Բաղդասարյանին դոցենտի կոչում ստանալու համար երաշխավորություն տալուն: Նրա անձնական տվյալների և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի որոշման մասին զեկուցեց մրցութային հանձնաժողովի նախագահ Հ.Մնացականյանը: Նա ասաց, որ մրցութային հանձնաժողովը երաշխավորում է Ք. Բաղդասարյանին մասնակցելու գիտխորհրդի քննարկմանը:

Ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Ա.Կարապետյան /նախագահ/, Հ.Զաքոյան, Հ.Հովհաննիսյան:

Լսեցին հաշվիչ հանձնաժողովի նախագահի հաժվետվությունը քվեարկության արդյունքների վերաբերյալ: Ք.Բաղդասարյանի օգտին քվեարկել են քվեարկությամբ մասնակցած գիտխորհրդի 28 անդամներից 26-ը, դեմ չկա, անվավեր քվեաթերթերի թիվը 2-ն է:

Որոշեցին երաշխավորել Ք.Բաղդասարյանին ստանալու դոցենտի գիտական կոչում:
Ընթացիկ հարցերի շրջանակում վերահաստատվեցին որոշ թեմաներ և հաստատվեց դոկտորական ատենախոսության մեկ թեմա /քաղվածքները ուղարկվում են ասպիրանտուրայի բաժին/:

Ֆակուլտետի գիտխորհրդի
նախագահ, տ.գ.դ., պրոֆեսոր

Ֆակուլտետի գիտխորհրդի
քարտուղար, տ.գ.թ., դոցենտ



Հ.Լ.Սարգսյան

Ա.Հ.Համբարձումյան